«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դասվար՝ .....Ղարիբջանյան ԱրուսյակՍտեփանի

Ղեկավար՝ .....Շողիկ Սարգսյան

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

Գլուխ 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ.....3

1.1.ՀԱՅ ՄԵԾԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՄԱՍԻՆ.4

1.2.ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԻՆ:ԱՌԱԾՆԵՐԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ.....7

1.3.ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....9

ԳԼՈՒԽ 2.ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ.....11

2.1.ԱՌԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....11

2.2.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ՀԱՇՎԵԼՈՒԿՆԵՐ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսությունը ժողովրդական բանավոր ստեղծագործությունների ամբողջություն է: Այն ձևավորվել է մարդկային լեզվի ու մտածողության ծագմանը զուգընթաց: Բանահյուսության մեջ ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել կարևոր դեպքերը, իր դարավոր փորձն ու իմաստությունը, ձգտումներն ու իդեալները: Բանահյուսությունը տվյալ ժողովրդի պատմությունն է և ինքնության հայելին: Բանահյուսական ստեղծագործությունները ստեղծվել և փոխանցվել են սերնդեսերունդ: Դրանք երգվել են, պատմվել «ասացող»- ների կամ բանասացների կողմից: Բանահյուսական ստեղծագործությունները մոռացումից և անհետացումից փրկել են բանահավաքները, որոնք լսել, ապա գրի են առել դրանք:

Երեխաների բանահյուսական ժանրերին ծանոթությունը տեղի է ունենում վաղ տարիքից: Դրանք օրորոցային երգերն են, խաղերը, մանկական ոտանավորները, հանելուկները, հեքիաթները և այլն: Երեխան փոքր տարիքից տանը լսում է դրանք, ապա՝ կրկնում ու սովորում:

Թե՛ դպրոցում, թե՛ նախակրթարանում բանահյուսական ստեղծագործությունները կիրառելը ոչ միայն ցանկալի է, այլև՝ անհրաժեշտ: Հետաքրքրությամբ, հիացմունքով երեխաները փորձում են ընդօրինակել ուսուցչին (դաստիարակին), կրկնել նրա գործողությունը: Կրկնելով բանաստեղծություն, մանկական ոտանավորներ և արտահայտություններ մեծահասակի հետ միասին՝ երեխաները զարգացնում են երևակայությունը, խոսքն ու հույզերը հարստանում են: Փոքր բանահյուսության ձևեր լսելիս երեխաների մոտ ագրեսիվությունը նվազում է: Մանկական ոտանավորները, կատակները, վանկարկումները հնչում են քնքուշ՝ արտահայտելով խնամք, քնքշություն, հավատ:

Տարրական դասարաններում երեխաները բանահյուսական այնպիսի ժանրերի հետ են առնչվում, որոնք են՝ առակը, հեքիաթը, հանելուկը, առած-ասացվածքներ, շուտասելուկներ, խնդուկներ, հեքիաթներ, առակներ, դարձվածքներ, հաշվելուկներ եւ այլն:

ԳԼՈՒԽ 1.Ժողովրդական բանահյուսությունը

1.1.Հայ մեծերը ժողովրդական բանահյուսության մասին

… Ժողովրդական բանահյուսությունը գեղարվեստական յուրօրինակ մտածողություն է: Առասպելների, հեքիաթների, վեպերի, վեպերի, երգերի, առածների մեջ պատկերավորված է ժողովրդի ստեղծագործական վառ երևակայությունը, նրա խոսքի, արվեստի անսպառ գանձերն իրենց գունագեղ արտահայտչականությամբ: [1]

Արամ Ղանալանյան

Բանահյուսությունը այս կամ այն ժողովրդի կողմից դարերի, հազարամյակների ընթացքում կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունն է: Դրանք, սերնդեսերունդ բանավոր հաղորդվելով, հարստացվել, հղկվել են: հավաքական բանականության և հավաքական հույզի արգասիքը: Սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից (բանահյուսությունը սկզբնավորվել է հայկական ցեղերի և հայոց լեզվի առաջացման հետ միաժամանակ), այն հոսանուտ գետի պես, անընդհատ նորոգվել է, իր մեջ ներառելով ժողովրդի աշխարհընկալումը, դարավոր կենսափորձն ու իմաստությունը: Այն ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը սերնդեսերունդ փոխանցվել և հասել է մինչև մեր օրեր: Բանահյուսական ստեղծագործություններում արտացոլված են ժողովրդի հոգեբանությունը, երազանքները, պատկերացումները աշխարհի, բնության մասին, պատմական բախտորոշ իրադարձություններ:

Բանահյուսության ժանրերն (տեսակներն) են՝ հեքիաթը, առասպելը, հանելուկը, առածը, ասացվածքը, ավանդությունը, լեգենդը, վիպերգությունը, առակը, դարձվածքը, շուտասելուկը, հաշվելուկը և այլն:

1. Գայանե Օհանյան, «Հայ գրականության քրեստոմատիա», Հրազդան, 2013թ·
2.

Բանահյուսության ժանրերը

… Բանահյուսական երկերը մեծ մասամբ գրի են առնված գյուղացիներից, ուստի ժողովրդական բանահյուսություն ասելով՝ հասկանում են հասարակ ժողովրդի, ռամիկի, գյուղացիների ստեղծած գեղջկական բանահյուսություն։[2]

Մանուկ Աբեղյան

Ինչպես գիտենք՝ ժողովրդական բանահյուսությունը տվյալ ժողովրդի պատմությունն է և ինքնության հայելին։ Հենց ազգային և էթնիկ առանձնահատկություններն էլ արտացոլվել են բանահյուսական երկերում։ Բանահյուսական երկերը և՛ չափածո են, և՛ արձակ, դրանք արտասանվել են, երգվել և բերանացի էլ տարածվել։

Բանահյուսական ժանրեր են՝ հեքիաթը, առասպելը, հանելուկը, առածը, ասացվածքը, ավանդությունը, լեգենդը, վիպերգությունը, առակը, երգը և այլն։

Հեքիաթը բանահյուսական ամենահին տեսակներից է։ Հեքիաթին հատուկ է սեղմ ու պատկերավոր ոճը, այլաբանությունը, խորհրդանիշները, չափազանցությունը, իմաստալից խոսքերն ու առածները։ Հեքիաթները լինում են՝

- իրապատում
- կենդանապատում
- հրաշապատում։

Հայկական ժողովրդական հեքիաթներում հաճախ հերոսները անուն չունեն, նրանք հավաքական կերպարներ են։ Հեքիաթներ մշակել և գրել են Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, Գրիմմ եղբայրները, Հ. Քրիստիան Անդերսենը, Ա. Ս. Պուշկինը և ուրիշներ։

Վիպերգը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից մեկն է։

2. Մանուկ Աբեղյան, Հտ. Ա(Երևան, 1966)

Վիպերգերը ծնվել են ժողովրդի համար բախտորոշ պատմական իրադարձությունների ազդեցության տակ։ Դրանք եղել են զրույցներ, երգեր պատերազմների և հերոսների մասին։ Աստիճանաբար պատմական հերոսներին վերագրվում են հեթանոս աստվածների հատկանիշներ։ Վիպերգերի տեսակներն են՝

- ավանդավեպը
- գողթան երգերը
- թվելյաց երգերը
- վիպասանքը
- էպոսը։

Էպոսը ամենածավալուն բանահյուսական ժանրն է՝ ժողովրդական վեպը, որում խտացել են ժողովրդի բնավորության գծերը, կենցաղը, հոգեբանությունը, երազանքները, թերությունները, պատմությունը։ Էպոսը ժողովրդի ինքնաբնութագիրն է, ինքնակենսագրությունը։ Էպոսին հատուկ են չափազանցությունը, այլաբանությունը, սիմվոլ- խորհրդանիշը, հրաշապատում նկարագրությունը։

Առակը ի սկզբանե եղել է կենդանապատում հեքիաթներից մեկը։[3] Հետագայում այն դարձել է խրատական բնույթի բանահյուսական տեսակ։ Առակին բնորոշ են այլաբանությունը, չափազանցությունը, երբեմն՝ երգիծական բովանդակությունը։ Առակներում ծաղրվում կամ քննադատվում են մարդկային արատները։ Առակը փոքրածավալ երկ է, որն ունի բարոյախրատական ավարտ։ Առակները լինում են արձակ և չափածո։ Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մա-գիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ։ 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին։

Հանելուկը բանահյուսական ժանր է, որը փոխանցվել է նաև գրականությանը։ Ունեցել է մի քանի անվանում՝ *առակ, հանք, պրնգրլ, ճեռոք* և այլն։ Հանելուկն

3.https://hy.wikipedia.org

առարկան, երևույթը պատկերում է այլաբանորեն, նրա հատկանիշները նկարագրում գաղտնագրված։ Կազմված է երկու բաղադրիչից՝ բանաձևից և լուծման առարկայից։

Գրականության մեջ մշակվել է 5-րդ դարից, չափածո մեկ կամ մի քանի տողից կազմված սեղմ բանաձև է, մեծ մասամբ՝ հարց։ Խոր հնադարում լայն կիրառութ-յուն է ունեցել իբրև մարդու մտավոր հասունությունը և հնարամտությունը փորձելու միջոց, իսկ մեր ժամանակներում վերածվել է մանկական ժամանցի։ Հանելուկը արձակ կամ չափածո, մեկ կամ մի քանի տողերից բաղկացած գեղեցիկ պատկեր է, որն *«Ի՞նչն է», «Այն ի՞նչն է, ի՞նչը», «Ի՞նչն է, որ»* հարցերով մի անձն առաջադրում է մյուսին։ 12-րդ դարում Ներսես Շնորհալին հորինել է մի քանի հարյուրի հասնող հանելուկներ։

Դարձվածքները առօրյա, ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ են։ Դարձվածքները լեզվի պատկերավորման միջոցներ են, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը։ Դարձվածքների կարևոր հատկանիշներից մեկը փոխաբերական-այլաբանական իմաստն է։ Այլ կերպ ասած՝ խոսքի «աղն ու համեմունքն» են։

Շուտասելուկը մանկական ժողովրդական բանահյուսության կատակային տեսակ, բանաձևային ասույթ է։ Տաղաչափորեն բաղկացած է մի քանի անդամներից, հանգավոր կամ անհանգ տողերից, որոնց մեջ գերիշխում են նույնահունչ բառերի, նույն կամ նման բաղաձայն հնչյունների կրկնությունները, որոնք դժվարացնում են ճիշտ արտասանությունը։ Շուտասելուկը լեզվահնչյունական յուրօրինակ խաղ է, վարժություն։ Դժվար արտաբերության պատճառով հաճախ արտասանվում է ծիծաղաշարժ աղավաղումներով։ Շուտասելուկը մանկական լեզուն վարժեցնում է հնչյունական բարդ և ճիշտ արտասանության։

Հաշվելուկը փոքրիկների հետ բարձրաձայն ասվող ոտանավոր է, նրանց հաշվել և արտասանել սովորեցնելու նպատակով է կիրառվել։ Օգտագործվում է նաև մանկական խաղերում դերերը բաշխելու համար։

1.2.ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԻՆ: ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Տարրական դպրոցի հիմնական նպատակը աշակերտի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, հնարամտության և ստեղծագործական մտածողության զարգացումն է: Այս տարիքում ձևավորվում են նաև աշխատանքային նախնական հմտություններ: Տարրական դասարանների հմուտ մանկավարժների օգնությամբ իրականացվում է սահուն անցում նախակրթարանից տարրական դասարաններ, այնուհետև նաև միջին դպրոց: Տարրական դասարաններում կիրառվող ուսուցման և ուսումնառության մեթոդները նպաստում են երեխայի անհատական զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ստեղծագործական մտքի զարգացմանը:

Բանահյուսական ժանրերի կիրառումը տարրական դասարաններում նպաստում է երեխաների խոսքի զարգացմանը, հարուստ երևակայություն ունենալուն, տրաբանության զարգացմանը և այլն:

Առածներն ու ասացվածքները մեր ժողովրդախոսակցական լեզվի անբաժանելի մասն են: Տանը երեխան հաճախ է մեծերից լսում առածներ կամ ասացվածքներ այս կամ այն իրավիճակում: Նա, երբեմն հասկանալով, երբեմն՝ ոչ, կրկնում է և ներառում իր բառապաշարի մեջ: Դպրոցում, երբ ուսուցիչը, բացատրում է առածների և ասացվածքների իմաստը և բերում օրինակներ, երեխան կարողանում է ավելի ճիշտ կողմնորոշվել դրանք իր խոսքում կիրառելիս:

Առածներն ու ասացվածքները, բացի խոսքի պատկերավորման միջոց լինելուց, տարրական դասարաններում սովորող երեխայի (ոչ միայն) համար ունեն նաև դաստիարակող հատկություն:

Այսպես՝ չափավոր լինելու համար ասում են.

- Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի[4]
- Ավելորդ բարությունը չարիք է ծնում

- Ոտդ վերմակիդ չափ մեկնիր
- Շատ ծիծաղը լաց կբերի

  Ամեն բան ժամանակին կատարելու համար ասում են.
- Այսօրվա գործը վաղվան չեն թողնի
- Կրակը չվառած՝ հաց չեն թխի
- Երկաթը տաք-տաք կծեծեն

Արդարության և սոցիալական անհավասարության համար՝

- Աղքատին հաց տվող չկա, խրատ տվող շատ կա
- Արեգակը աղքատի կարպետն է
- Ձյունն ի՞նչ գիտի, թե աղքատը փայտ չունի
- Մեկին՝ պուտ-պուտ, մեկին՝ փութ-փութ

Աշխատանքի, աշխատասիրության , արհեստի մասին՝

- *Աշխատանքը մայրն է ամեն բարիքի, ծուլությունը՝ չարիքի*
- *Աշխատասիրությունը բախտի աջ ձեռքն է*
- *Արհեստը օսկե բիլազուկ է*
- *Աշխատող խոփը չի ժանգոտի*

Ուսուցիչը կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս պետք է երբեմն խոսքում կիրառի առածներ, ասացվածքներ: Դա երեխաների համար լավ օրինակ է՝ հարուստ բանավոր խոսք ունենալու համար: Ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար ուսուցիչը կարող է որևէ առած կամ ասացվածք ընտրել վերնագիր և երեխաներին հանձնարարել փոքրիկ գրույթ գրել նյութին, թեմային առնչվող:

4. Նվեր Մկրտչյան, Կարինե Ս-Սարգսենց, «Դպրոցական ժողովածու», Երևան, «Անտարես», 2013թ.

1.3.ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հեքիաթները կրտսեր դպրոցականների ամենասիրելի ստեղծագործություններից է: Եթե փոքր տարիքում իրենք լսել են հեքիաթներ, ապա այժմ կարող են նաև կարդալ, ուսուցչի հետ բնութագրել հերոսներին և այլն:

Տարրական դասարաններում հեքիաթի ուսուցումը կարևոր է երեխաների հարուստ ներաշխարհի, ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար: Հեքիաթի դասավանդումը ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում:Սրանք երկուսն էլ խիստ կարեւոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Հեքիաթը ուսուցանելիս ուսուցիչը սկզբից պետք է վարի նախապատրաստական զրույց, ապա արտահայտիչ կարդա բնագիրը, որից հետո բացատրի հեքիաթի բովանդակությունը, երեխաների հետ բնութագրի հերոսներին, նրանց արարքները, լավ ու վատ կողմերը: Օգտագործելով մեթոդական հնարներից T-աձև աղյուսակը՝ ուսուցիչը սովորողների հետ հեքիաթից կառանձնացնի բարի և չար հերոսներին, միասին կվերլուծեն նրանց արարքների հետևանքները: Այսպիսով նա կապահովի դաստիարակչական, հուզական ներգործությունը: Գեղարվեստական, զգացական և ստեղծագործական կարողությունները վեր հանելու համար կարելի է կիրառել «Քա-ռաբաժան» մեթոդական հնարը: Երեխաներին կառաջարկվի իրենց պատկերացնել այս կամ այն հերոսի փոխարեն, փոխել հեքիաթի բովանդակությունը, հորինել նոր ավարտ կամ սկիզբ: Կարելի է առաջարկել երեխաներին, որ նրանցից յուրաքանչ-յուրը հեքիաթը պատմի այս կամ այն հերոսի տեսանկյունից՝ փորձելով բացատրել

արարքների նպատակները։ Այստեղ նաև կարևոր է, որ երեխաները հասկանան և տարանջատեն իրականն ու երևակայականը, բացահայտեն հեքիաթային մասը։ Չէ՞ որ հեքիաթներում ամեն ինչ այլ է։

Բառապաշարի հարստացման համար երեխաներին կառաջարկվի հեքիաթի բովանդակությունից առանձնացնել և դուրս գրել իրենց անծանոթ բառերը, որոնք կգրվեն գրատախտակին և կբացատրվեն։

Հեքիաթի ուսուցումը պետք է ավարտվի նրա բարոյախրատական կամ դաս-տիարակչական եզրակացությամբ, որը այս տիպի նյութերի ուսումնասիրության ամենահիմնական ու առանձնահատուկ կողմերից մեկն է։ Պետք է պարզել, թե աշակերտները ի՞նչ սովորեցին, քաղեցին ուսուցանվող հեքիաթից, ո՞րն է նրա հիմ-նական միտքը, գաղափարական բովանդակությունը։

Հեքիաթների դասավանդման ամենավերջին փուլն այն համապատասխան առածների,ասացվածքների եւ հանելուկների հետ կապելն է։

Հեքիաթը պատմելիս երեխան պետք է ազատորեն արտահայտի իր միտքը։ Խոսքը պետք է սահուն ու անկաշկանդ լինի։ Նա իր խոսքում կարող է կիրառել նոր բառեր, խոսքի պատկերավորման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են դարձվածքները, առած-ները, ասացվածքները և այլն։

ԳԼՈՒԽ 2.ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

2.1.ԱՌԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Առակի ժանրը մուտք է գործել հայ գրականություն 12-13-րդ դարերում: Այդ ժամանակաշրջանում հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Մեզ են հասել Մխիթար Գոշի «Առակների» և Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք» ժողովածուները:

Տարրական դասարաններում առակի ուսուցումը սովորողների համար հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար պետք է մի քանի նկատառում հաշվի առնել: Ինչպես հեքիաթների, այնպես էլ առակների ուսուցման գործընթացն այնպես պետք է կազմակերպել, որ մայրենի լեզվով կարդալ և ընթերցածը պատմել սովորեցնելուց զատ, ձևավորվեն ստեղծագործական ենթատեքստը հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, համեմատելու և հակադրելու կարողություններ:

Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը,ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և,ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այդ իսկ պատճառով առակների ուսուցումը բավականին կարևոր է գիտելիք փոխանցելու տեսանկյունից:

Տարրական դասարաններում առակի ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ երեխան ճիշտ հասկանա առակի բովանդակությունը, խրատական մասը և այլաբանությունը: Առակներն անցնելիս ուսուցչի հիմնական ուշադրությունը պետք է

կենտրոնացված լինի, որ երեխաները հասկանան՝ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են, որոնք իրական կյանքում գոյություն ունեցող կերպարներ են: Նրանք, համեմատություն կատարելով, կընտրեն

ու վեր կհանեն մարդկային լավագույն որակները:

Առակի բարոյական կողմի կամ տրամաբանական եզրակացության մեկնաբանությունն ավելի մատչելի,յուրացումն ավելի կայուն ու խոր դարձնելու նպատակով կարելի է կիրառել համապատասխան առածներ ու ասացվածքներ, որոնք առակի հիմնական միտքն արտահայտում են պարզ, հակիրճ ու անմիջական կերպով:

Առակի ուսուցման ժամանակ առածների ու ասացվածքների օգտագործումը ոչ միայն մեծապես նպաստում է նրա բովանդակության բացահայտմանը, այլև զարգացնում է երեխաների տրամաբանական մտածողությունը, հարստացնում ու ճոխացնում նրանց լեզուն, խոսքը դարձնում պատկերավոր,կոնկրետ ու դիպուկ: Տարրական դասարաններիի մայրենիի դասագրքերում եղած առակների այլաբանությունների բացահայտումը երեխաներին աստիճանաբար կհասցնի մի շարք տարածված այլաբանությունների ըմբռմանը:

Առակների ուսումնասիրման ընթացքում տարրական դասարաններում կարելի է

տանել հետևյալ պլանով.

1. Նախապատրաստական զրույց:

2. Առակի ընթերցում ուսուցչի կողմից:

3. Առակի ընթերցում աշակերտների կողմից ու բառերի բացատրություն:

4. Առակի վերլուծություն՝ ըստ առանձին մասերի,բովանդակության եւ ձևի:

5.Մասերի վերնագրում կամ պլանի կազմում:

6.Բովանդակության վերարտադրում:

7.Կերպարների բնութագրում եւ գլխավոր մտքի կազմում:

8.Ամփոփում:

2.2.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ՀԱՇՎԵԼՈՒԿՆԵՐ

Երեխաների համար ամենասիրելի և զվարճալի ժանրերից են հանելուկը, շուտասելուկը և հաշվելուկը: Դասի ընթացքում հանելուկի, առակի, շուտասելուկի առաջադրումը առաջ է բերում աշխուժություն, թարմություն, մտքի շարժ: Երեխաների մոտ զարգանում է հիշողությունը, տրամաբանությունը, ուշադրությունը, երևակայությունը, փոքրիկները ճանաչում են բնությունը, իրերը, առարկաները և նրանց հատկությունները: Լուծվում են լեզվական խնդիրներ, երեխաների մոտ հեշտանում է արտահայտվելը, արագ կողմնո-րոշվելը, կարծիք հայտնելը:

Հանելուկը ժողովրդական բանահյուսության ժանր, որ փոխանցվել է նաև գրականությանը: Ունեցել է մի քանի անվանում՝ *առակ, հանք, պրնգրլ, ճեռոք* և այլն: Հայ մատենա-գրության մեջ հանելուկը վկայված է VII դարից: XII դ.Ներսես Շնորհալին հորինել է մի քանի հարյուրի հասնող հանելուկներ, որոնցով հանելուկն իբրև ժանր մտել է հայ գրականության մեջ:

Կապույտ սփռոց է ընդարձակ,

Մերթ՝ անծաղիկ,

Մերթ՝ ծաղկազարդ: (երկինք)

Ֆ

Անձրևը՝ հայր,

Արևը՝ մայր,

Երկինքն՝ անծայր զբոսավայր: (ծիածան)

Ֆ

Գնաց -գնաց,

Տարավ-տարավ,

Տեղ հասավ, բայց դադար չառավ: (գետ)

Ֆ

Հանելուկ-հանմանելուկ,

Մեջն՝ ուտուկ,

Դուրսը՝ վառուկ (ընկույզ)

Ֆ

Տակառ ունեմ մի պուճուր,

Մեջը՝ երկու գույնի ջուր (հավկիթ)

Ֆ

Ափ անեմ,

Ծափ անեմ,

Հում տանեմ, եփած հանեմ (լավաշ)[5]

Հաշվելուկը փոքրիկների հետ բարձրաձայն ասվող ոտանավոր՝ նրանց հաշվել և արտասանել սովորեցնելու նպատակով: Օգտագործվում է նաև մանկական խաղերում դերերը բաշխելու համար:

Մեկ, երկու, երեք,

Զմերուկը բերեք,

Չորս, հինգ, վեց,

Ընկավ, կոտրվեց,

Յոթ, ութ, ինը,

Տվեք նրա գինը:

5. *Յուրի Սահակյան, «Հայ ժողովրդական հանելուկներ», ՋԱՆԳԱԿ-97, 1998թ.*

Շուտասելուկը լեզվահնչյունական յուրօրինակ խաղ է, վարժություն։ Ենթադրում է երկու կողմ՝ առաջադրող և արտասանող կատարող։ Վերջինս պետք է, արագ ու բազմիցս կրկնելով, ճիշտ արտասանի բանաձևը։ Դժվար արտաբերության պատճառով հաճախ արտասանվում է ծիծաղաշարժ աղավաղումներով։ Շուտասելուկը մանկական լեզուն վարժեցնում է հնչյունական բարդ և ճիշտ արտասանության։

Ճռռան դուռը ճռճռաց,
Մռռան կատուն մռմռաց,
Դուռը ճռռաց, կատուն մռռաց,
Ամպն էլ գոռաց-գոռգոռաց։
Ֆ
Մուկը մատը մատին կտա,[6]
Տան կարասը պատին կտա
Ֆ
Արտին մոտիկ՝մոռ ու մորի,
Մռռան կատուն կտրորի։
Ֆ
Ունի չունի,ունի չունի,
Լիքը բան կա, որ չունի,
Բայց,որ չունի ինչ անի
Ֆ
Սա ասի՝նա կանի, նա ասի՝սա կանի։
Ֆ
Չոր ցցին՝սառ տանձաջուր,
Չալ ծտին՝չար ծտաճուտ։
Ֆ
Զարթուցիչը ջեռուցիչից հեռու՛դիր։
Ֆ
Ճուտը ճկեց ծիտը, կծեց ծտի ճիտը։

6. http://9hrashaliq.blogspot.com/p/blog-page_29.html

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում սովորելիս աշակերտը ձեռք է բերում գրագիտություն, հմտություններ, զարգանում են տրամաբանությունը, երևակայությունը, խոսքը: Գրագետ խոսք և հարուստ ներաշխարհի ձևավորելու, ստեղծագործական ունակությունները բացահայտելու համար կիրառվում են նաև բանահյուսական ժանրերը:

Հայ ժողովուրդն իր բազմադարյա գոյության ընթացքում ստեղծել է հարուստ բանահյուսություն: Բանահյուսական ժանրերը հիմք են դարձել մանկական գրականության ստեղծմանը: Տարրական դասարաններում բանահյուսական ժանրերը օգնում են, որ երեխայի խոսքը լինի պատկերավոր, հարուստ, զարգանա երևակայությունը, աշխարհընկալումը: Օրինակ՝ առածներն ու ասացվածքները խոսքն ավելի դիպուկ են դարձնում, հեքիաթներն ու առակները օգնում են հասկա-նալ չարն ու բարին, լավն ու վատը, զարգացնում են բանավոր պատմողական խոս-քը, հանելուկները մարզում են միտքը, հիշողությունը, շուտասելուկները վարժեցնում են հնչյունական բարդ և ճիշտ արտասանությանը, հաշվելուկները ճիշտ հաշվել են սովորեցնում, աշխուժացնում և ուրախ տրամադրություն հաղորդում:

Տարրական դասարաններում սովորողը, առնչվելով բանահյուսական ժանրերին, ունենում է հարուստ բառապաշար, գրագետ խոսք և տրամաբանություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գայանե Օհանյան, «Հայ գրականության քրեստոմատիա», Հրազդան, 2013թ.
2. Մանուկ Աբեղյան, Հտ. Ա(Երևան, 1966)
3. https://hy.wikipedia.org
4. Նվեր Մկրտչյան, Կարինե Ս-Սարգսենց, «Դպրոցական ժողովածու», Երևան, «Անտարես», 2013թ.
5. Յուրի Սահակյան, «Հայ ժողովրդական հանելուկներ», ԶԱՆԳԱԿ-97, 1998թ.
6. http://9hrashaliq.blogspot.com/p/blog-page_29.html
7. Հայկական Սովետական հանրագիտարան, I հատոր